

ՍԵՆ ԱՐԵՎԱՏՅԱՆ. Պատմություն: Փիլիսոփայություն: Մշակույթ, երևան, «Եվրոպինտ», 2018, 432 էջ*:

СЕН АРЕВАТЯН. История. Философия. Культура. Ереван, «Европrint», 2018, с. 432.

Բանալի բառեր՝ Սեն Արևշատյան, Եղնիկ Կողբացի, Դավիթ Անհաղթ, Հովհան Որոտնեցի, Գրիգոր Տամեւացի, Գլածոր, փիլիսոփայություն, հայությանախրություն, նորավառոնականություն, համալսարան:

2018 թ. վերջին ՀՀ ԳԱԱ-ի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտը և «Մատենադարան» Մաշտոցի անվան Հին ձեռագիրի ինստիտուտը միացյալ հրատարակել են ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Մատենադարանի երկարամյա տնօրեն Սեն Արևշատյանի փիլիսոփայական գիտական ժառանգության հատունտիրը՝ ռուսերեն ու հայերեն գործերից բաղկացած: Հասորի վերջում դրված է գիտնականի երկերի մատենագիտությունը՝ 1953 թվականից մինչև 2016 թվականը:



Գիրքը բաղկացած է 432 էջոց և ունի ռուսերենով գրված առաջաբան՝ «Ակադեմիկոս Ս. Արևշատյանի գիտական ժառանգությունը» խորագրով: Առաջաբանի հեղինակն անվանի գիտնական, փիլ. գ. դ., պրոֆ. Կառլեն Միրումյանն է, որը ոչ միայն Ս. Արևշատյանի գիտական ժառանգության քաջ գիտակն է, այլև համահեղինակ է նրա որոշ աշխատությունների:

Գրքում, որը կոչվում է «Պատմություն: Փիլիսոփայություն: Մշակույթ», Ս. Արևշատյանի գործերը բասարված են ժամանակագրական կարգով, որպեսզի երևան նշանափոր փիլիսոփայի գիտական մտքի առաջընթացը: Առաջաբանի հեղինակն իրավացիորեն նկատում է, թե գիտնականի տեսական որոշ գործերում կարելի է գտնել խորհրդավիճ շրջանի իշխող գաղափարախոսության հետքերը, սակայն այս հանգամանքը բնակվ չի ստվերում նրա թողած գիտական ժառանգության մնայուն արժեքը: Արևշատյանը ստեղծել է հիմնարար ու երակետային գործեր, որոնք ճանապարհ են հարթել հայ միջնադարյան փիլիսոփայությունը հետագույղ հետագա գիտնականների համար: Նա իր բազմաթուղ գիտական աշխատություններում փայլուն ձևով միավորել է պատմաբանի, փիլիսոփայի, աղբյուրագետի, բնագրագետի ու թարգմանչի տաղանդը (Էջ 7):

* Ներկայացվել է 12. II. 2021 թ., ընդունվել է տպագրության 10. III. 2021 թ.:

Ա. Արևշատյանի թարգմանչական եղակի տաղանդի շնորհիվ հայ միջնադարյան ինքնուրույն և թարգմանական փիլիսոփայական մտքի փայլուն ներկայացուցիչների՝ եղնիկ Կողբացու, Դավիթ Անհաղթի, Գրիգոր Տամէւացու, Հերմես Եռամեծի և հայ միջնադարյան փիլիսոփայական միտքը ձևավորած այլ մեծ մտածողների աշխատությունները գրաբարից կատարած թարգմանություններով լույս են տեսել ոռուերենով և այն էլ ոչ մեկ անգամ։ Խուսերենով են լույս տեսել Մոսկվայում Հրատարակվող տարբեր Հեղինակավոր հանրագիտարաններում տպագրված բազում հոդվածներ՝ նվիրված Հովհան Որոտնեցուն, Մատթեոս Զուղայեցուն, Մեսրոպ Մաշտոցին, Միհիթար Գոշին, Դավիթ Անհաղթին, Մատենադարանին և ուրիշների։ Բազմաթիվ են գիտնականի հոդվածները՝ տպագրված Հայկական սովետական հանրագիտարանի տարբեր հատորներում։ Դրանցից են՝ Արիստոտելին, Բարդուղիմեսոս Բոլոնիացուն, Գրիգոր Մագիստրոսին, Գրիգոր Տամէւացուն, Եղնիկ Կողբացուն, Հակոբ Քոնեցուն, Հովհան Ռակեբերանին, Հովհան Ֆիդանցային, Նիկողայոս Լյուբացուն, Պարույր Հայկազնին, Պլատոնին, նոմինալիզմին և ռեալիզմին, Պլոտինին, Պյութագորասին, Պրոկլես Կոստանդնուպոլսիցուն, Պոնցիոսին, Պրոկլ Դիագոլիսոսին, Պորֆիրիոսին նվիրված հոդվածները, որոնք նշանավորում էին գիտական փաստերի առավել քան ճշգրտություն։

Իր թարգմանական բեղուն աշխատանքում Արևշատյանը երբեմն հեղինակից է դարձել կնոջ՝ բ. գ. դ. Քնարիկ Տեր-Դավթյանին, որը նույնպես մեծ ծառայություն ունի հատկապես հայ վարքագրությունները ոռուերեն թարգմանելու այնքան կարևոր գործում։ Նրանց համատեղ վերջին թարգմանական գործն Ագամիանգեղոսի «Հայոց պատմությունն» էր (անգլ.՝ Ա. Դավթյան, Ա. Արևշատյան, Երևան, 2004)։

Ս. Արևշատյանի առանձին աշխատություններ լույս են տեսել Գերմանիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում։ Նրա ոռուերեն թարգմանական գործի պասկներից մեկն էլ 2011-ին Երևանում լույս տեսած Գրիգոր Լուսավորչի «Յաճախապատում ճառերն» են («Մոնուական պատմություններ» հայության պատմությունների համար պատմություններ» առաջնային պատմությունների համար)։

Զմոռանանք նաև այն իմաստալից դասախոսությունները, որոնք Արևշատյանը վարում էր Մոսկվայի «Կյուլտուրա» («Մշակույթ») հեռուստաալիքով՝ ոռուալեղու ներկայացնելով Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի միջնադարյան գանձերը՝ հայ մտքի հանճարը հասանելի դարձնելով աշխարհին։

Գրախոսավոր գրքի հայերեն հատվածում հատկապես արդիական հնչողություն ունի «Մովսես Խորենացին ազգային ինքնիշխանության մասին» հոդվածը։ Գիտնականը շեշտում է «Հայոց պատմության» այն հատվածները, որոնք Պատմահայրը գրել է դարերի համար՝ մեզ ու հետագա սերունդներին հղելով չմոռացվող պատգամներ։ Խոսելով Հայկան Արամի մասին՝ Պատմահայրն ասում է. «Սա աշխատասեր և հայրենասեր մարդ լինելով լավ էր համարում հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ինչպես օտարացեղ ազգեր ոտնակոխ են անում իր հայրենիքի սահմանները, և օտարները տիրում են իր արյունակից հարազատների վրա» (էջ 408)։

Փիլիսոփան Հին կտակարանից հիշեցնում է Մովսես Խորենացու այն կարևոր գիտարկումը, որով Երեմիա մարդարեն հաստատում է, թե իր ապրած ժամանակներում հայերն արդեն պետականություն ունեին և կարող էին իրենց զինված ուժերով օգնել իսրայելցիներին. «Հրաման տուր, – ասում է նա, – Արարատյան թագավորությանը և Ասքանազյան գնդին» (Էջ 409):

Խորենացին հայ առաջնորդներին ու ազգին պատգամում է բոնությանը պատասխանել բոնությամբ և հերոսական պայքար մղել հանուն սեփական անկախ պետականության, կերտել հայագիր հզոր ու անձնազոհ զորավար, ինչպես Մակաբեն էր, և ունենալ սեփական թագավորությունը վերականգնող Զորաբարել (Էջ 417):

Մեծարժեք է «Արիստոտելը և հայ փիլիսոփայությունը» ուսումնասիրությունը, որից պարզ երևում է, որ Արևշատյանը ծանոթ է Արիստոտելի փիլիսոփայական ողջ ժառանգությանը և հայ փիլիսոփայական մտքի դարավոր ընթացքի մեջ այդ հանճարեղ ու չնացող իմաստունի թողած ազգեցությանը: Հիշենք հույն փիլիսոփայի «Եթիկա» աշխատությունից մի միտք, որն ասված է բոլոր ժամանակների ու բոլոր ազգերի համար. «Արժանավոր մարդ լինել նշանակում է օժտված լինել առաքինություններով: Եվ նա, ով մտածում է գործել հասարակական ու քաղաքական կյանքում, պետք է լինի առաքինի իրավունքի մարդ»¹:

Արիստոտելի բարոյագիտական, քաղաքական, գրականագիտական մտքերն արդեն առաջնային էին ոսկեդարի հայ փիլիսոփայական մտքի համար. դրանք ջանադիր ձևով թարգմանվում էին, յուրացվում, մեկնաբանվում: Վերոհիշյալ հոդվածով Արևշատյանն առաջինը մեզանում ընդհանուր գծերով ուրվագծել է Արիստոտելի փիլիսոփայության կատարած գերը՝ ողջ հայ միջնադարյան իմաստափրական մտքի ձևավորման ու հասունացման խնդրում: Աթենքի, Կոստանդնուպոլիսի, Աղեքսանդրիայի գիտական դպրոցներում ուսանած հայ մտավորականներն արդեն V դ. վերջում և VI-ի սկզբում հայերեն են թարգմանում Արիստոտելի «Օրգանոնի» հինգ գրքերից երկուարությունը՝ «Ստորոգութիւնք» և «Յաղագս մեկնութեան» երկերը (Էջ 392): Դրանք համաշխարհային գրականության մեջ համարվում են Արիստոտելի երկերի հնագույն ու ծշգրիտ թարգմանություններից (նույն տեղում):

Հանդամանալի ներկայացվում է Դավիթ Անհաղթի փիլիսոփայական մտքի վրա Արիստոտելի ուսմունքի թողած վիմխարի ազդեցությունը: Գիտնականը պարզել է արդեն VI դարում հայ փիլիսոփաներին ծանոթ էին Արիստոտելի ուսմունքի ավելի մեծ քանակի աշխատություններ (Էջ 395): Դա հատկապես երևում է Դավիթ Անհաղթի գործերից, որը հաճախ հիշատակում է Արիստոտելի «Յաղագս հոգուոյ», «Յաղագս անձին», «Յաղագս բուսոց և տնկոց», «Կենդանեաց պատմութիւն», «Յաղագս ծովոց և գետոց և աղբերց», «Յաղագս շարժմանց և պատառմանց», «Յաղագս երկնից» և այլ աշխատություններ: Արևշատյանը Դավիթ Անհաղթի փիլիսոփայությունը գնահատում է որպես նեոպլատոնականացված արիստոտելականություն (Էջ 397):

¹ Аристотель. Сочинения в четырех томах, т. 4. М., 1984, с. 296.

Անանիա Շիրակացին ևս VII դարում իր երկրակենտրոն համակարգը, օդերևութաբանական ու աստղաբաշխական բազմաթիվ գաղափարներ քաղել է Արիստոտել-Պտղոմեոսի ուսմունքներից (էջ 398):

Արիստոտելի ուսմունքի տարբեր դրսեւրումները տեսնում ենք Գրիգոր Մագիստրոսի և Հովհաննես Սարկավագ Իմաստասերի գործերում: Արիստոտելը կոչ էր անում արվեստագետներին հետեւել բնությանը, նմանվել նրան, ձգտել արվեստի գործերում հասնել բնության կատարելությանը (էջ 399): Հին հունական գրականության մասնագետ պրոֆեսոր Առաքել Առաքելյանը ևս Հովհաննես Իմաստասերի «Բան իմաստութեան ...» քերթվածի առումով ունի նույն նույն նկատումը. «Արվեստի արիստոտելյան այս ըմբռնումը Հովհաննես Իմաստասերի կողմից բխում է բնության, որպես օբյեկտիվ, ինքնին գոյող իրականության վրա հայելու փիլիսոփայական նրա կոնցեպցիայից»²:

Հստ Արեշատյանի՝ Արիստոտելի աշխատություններն ուղեցույց են եղել XVII դարի հայ մշակույթի վերելքի այնպիսի գործիչների համար, ինչպիսիք էին Սիմեոն Զուղայեցին և Ստեփանոս Լեհացին (էջ 401): Ստ. Լեհացին թարգմանել է Արիստոտելի «Մետաֆիզիկան», գրել գրա մեկնությունը, հետո էլ թարգմանել Արիստոտելի՝ շատ կարեւոր «Հոգու մասին» աշխատությունը, որի թարգմանությունը, ցագոք, չի պահպանվել:

Հայերենով է Արեշատյանի «Նոմինալիզմի առաջացումն ու զարգացումը միջնադարյան Հայաստանում» մեծարժեք ուսումնասիրությունը: Նկատենք, որ Դավիթ Անհաղթի փիլիսոփայական հայացքներին նվիրված տարաբնույթ հետազոտություններում Արեշատյանը շեշտված ձեռվ և բազում օրինակներով փաստում է հայ փիլիսոփայի՝ Արիստոտելի ուսմունքին հետևորդ լինելը, ինչպես նաև Գրիգոր Տաթևացուն նվիրված աշխատություններում խոսում է նրա փիլիսոփայության նոմինալիստական ուղղվածության մասին: Սակայն վերոնշյալ և այս հողվածում երեւոյթները դիտարկվում են առավել մեծ ընդգրկումներով՝ նրանում ներառելով այլ միջնադարյան հայ փիլիսոփաների հայացքներում եղած նույն երեւոյթի դիտարկումները:

Նոմինալիստական փիլիսոփայության փաստեր Արեշատյանը մատնացույց է անում Դավիթ Անհաղթի, Անանիա Շիրակացու, Հովհաննես Սարկավագ Իմաստասերի գործերում: Սարկավագը հայտարարում է. «Առանց փորձի կարծիքն հաւատարմանալ ոչ կարացեն, և փորձն՝ հաստատուն և աներկաց» (նույն տեղում): Կարեւորը մերօրյա գիտնականի՝ Ս. Արեշատյանի եղածանգումն է. «Փորձի նշանակության և զգայական ճանաչման դերի նման բարձր գնահատական միջնադարի պայմաններում մենք հանդիպում ենք առաջին անգամ: Արևմտանելրոպական փիլիսոփայության մեջ միայն մեկ և կես դար հետո նման միտք է արտահայտվել անգլիական խորոշությունում մտածող ու բնագետ Ռոջեր Բեկոնի կողմից (էջ 347):

² Ա. Գ. Առաքելյան. Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն (I դ. մ. թ. ա. – XIV դ.), Երևան, 1959, էջ 332:

Հայկական փիլիսոփայական մտքի նոմինալիստական ուղղության առաջին խոչոր ներկայացուցիչ է համարվում Կիլիկյան Հայաստանի քաղաքական գործիչ, պատմիչ և փիլիսոփա Վահրամ Բաբունին (Էջ 348):

Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական հայացքներում էլ կան նոմինալիզմի դրսելորումներ. «Որոտնեցու իմացարանության և տրամաբանության հիմքը սենառուալիզմն է: Նա առանձնապես շեշտում է զգայարանների դերը իմացության գործընթացում: Իմացությունը, ըստ Որոտնեցու, սկսվում է զգացումներից և զգայական փորձից» (Էջ 356): Նոմինալիզմի Որոտնեցու տեսակետները մեծ դեր են կատարել Տաթևի փիլիսոփայական դպրոցի գաղափարական զարգացման մեջ: Դրանով Տաթևի ու Գլածորի համարաբաններում զարգացել են իմացարանությունը, տրամաբանության և բնագիտության էմպիրիկ-սենսուալիստական ընկալումները (Էջ 359):

Արևշատյանի կարծիքով՝ հայ փիլիսոփաների նոմինալիստական մտածողությունը նպաստել է ազգային եկեղեցու ինքնության պահպանմանը, որը ազգապահպանիչ հզոր երեսույթ է դարձել:

Գրիգոր Տաթևացին իր աշխատություններում բանականության գովքն է անում և այն անվանում է միակ ճշմարիտ և անկաշառ դատավոր (Էջ 362): Տաթևացու մտքի առաջադեմ խիզախումը Արևշատյանը բնորոշում է հետևյալ ձևով. «Միջնադարյան հայ մտածողի հանճարեղ կոահումը ուղղագնացության դերի մասին մարդու կյանքի և մտավոր գործունեության համար բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն փիլիսոփայական մտքի, այլ նաև առհասարակ գիտության պատմության ասպարեզում» (Էջ 366):

Գրքի մեծագույն մասը ուսւալեզու է և վերաբերում է ակադեմիկոսի գիտական կյանքում երկակատև ուսումնասիրությունների կիզակետ դարձած փիլիսոփաների՝ Գրիգոր Տաթևացու և Դավիթ Անհաղթի կյանքի ու նրանց թողած փիլիսոփայական ժառանգության մանրակիրկիտ քննությանը:

Գրիգոր Տաթևացին և նրա հիմնած Տաթևի համարաբանը XIV դ. վերջին ու XV-ի սկզբին այնքան մեծ հետք են թողել հայ ազգի հոգևոր կյանքում, որ, ինչպես վկայում է Նիկողայոս Աղոնցը, 1787 թ. Տաթևի եպիսկոպոս Հովհակիմի օրերին «Բունակոթ գյուղի մի քանի անձեր շինել են իրենց ծախքով մի դամբարան Գրիգոր Տաթևացու գերեզմանի վրա»³: Ովքեր մեր օրերում տեսել են այդ դամբարանը, որը կից է վանքին, կվկայեն վերջինիս ճարտարապետական բարձր արվեստի մասին:

Տաթևացին ոչ միայն հզոր մտքի տեր փիլիսոփա էր, այլև իսկական քաղաքացին էր իր երկրի: Նա հատուկ ուսումնասիրություն է գրել ընդդեմ մահմեղական կրոնի, որը կոչվում է «Ընդդեմ տաճկաց»: Ֆրեղերիկ Մակերերն 1933-ին Տաթևացու այս երկը թարգմանել է Փրանսերեն՝ խորագրելով «Խալամը հայ գրականության մեջ՝ ըստ Գր. Տաթևացու»: Փրանսիացի հայագետի Տաթևացու բնագրի հետազոտությունն ու դրա թարգմանությունը այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունը, որովհետեւ, ցավոք, այսօր

³ Ն. Ա դ ո ն ց. Երկեր, Հ. Ա., Երևան, 2006, Էջ 550–551:

տարբեր ժողովուրդների միջև դեռ ընթանում է արյունալի պայքար, որի հիմքում ընկած են տարբեր կրոններ ունեցող երկրների շահերը⁴:

Արևշատյանը մանրամասն և Հիմնավոր ներկայացրել է Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական ուսմունքի առաջարկմ կողմերը, որոնք համամարդկային նշանակություն ունեն:

Այս հիմնալի գրքի 145-ից մինչև 215 էջը նվիրված է XIV դ. Հայաստանի փիլիսոփայական դպրոցներին՝ Հիմք ունենալով Գլաձոր-Տաթևի համալսարանների փիլիսոփայական կրթական մակարդակը՝ ըստ ուսուցանվող առարկաների բովանդակության: Հետազոտողը լիովին օգտագործել է նախորդ ուսումնասիրողների՝ Վ. Զարյանի, Մ. Զամշյանի, Լ. Խաչիկյանի, Մ. Օրմանյանի հետազոտությունների ելակետերն ու փաստերը:

Գրքում առանձին բաժին է նվիրված Գլաձորի համալսարանին (էջ 281–338), որից երեսում են Արևշատյանի մանրախույզ հետազոտության շնորհիվ գիտական շրջանառության մեջ դրված հետաքրքիր փաստեր: Գլաձորի համալսարանի առաջին շրջանավարտներից է եղել պատմիչ, բանաստեղծ, Սյունիքի հոգևոր թեմի առաջնորդ Ստեփանոս Օրբելյանը: Գլաձորի համալսարանը սերտ կապերի մեջ է եղել Հայաստանի հեղինակավոր այլ դպրոցների հետ: Դրանցից էին Խորվիրապի դպրոցը, որի ղեկավարն էր Վարդան Արևելցին և Վերին Նորավանքի դպրոցը՝ ըաբունապետ Դավիթի գլխավորությամբ: Գիտնականը համառոտ բնութագրականներով ներկայացնում է նշանավոր դպրոցների ցանկը՝ կանգ առնելով նշանավոր շրջանավարտների վրա: Գլաձորի համալսարանի փառավոր դեմքերից էին մանրանկարիչ Թորոս Տարոնացին, տաղանդապոր ճարտարապետ, քանդակագործ, մանրանկարիչ, գրիչ Մոմիկը:

Գլաձորի և Տաթևի համալսարանները թողել են մշակութային մեծ ժառանգություն: Բավական է հիշել Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմությունը», թովմա Մեծոփեցու Լենկ թեմուրի արշավանքները ներկայացնող երկը: Միջնադարի հայ գեղարվեստական գրականությունը հարստացրել են Ստեփանոս Օրբելյանի «Ողբը», Առաքել Սյունեցու «Աղամգիրքը»: Որպես եղրակացություն Արևշատյանը գրում է. «Տաթևացու ու նրա ուսուցչի՝ Հովհան Որոտնեցու գործունեությունը չէր սահմանափակվում միայն գիտությամբ: Նրանք Եսայի Նչեցու և Ստեփանոս Օրբելյանի օրինակով իրենց գիտելիքներն ու եռանդը ուղղում էին երկրի առաջ ծառացած հասարակական-քաղաքական խնդիրների լուծմանը, կաթողիկությունը Հայաստանում տարածելու փորձերի դեմ: Պակաս չէր նաև երկու գիտնականների ծառայությունը՝ մանկավարժության բնագավառում: Աճեցնելով հարյուրավոր աշակերտներ, նրանք հայրենիքի համար ծանր ժամանք բարձրացրին ուսման ջահը, տարածելով լուսավորությունը Հայաստանի բոլոր կողմերը, որպեսզի թույլ չտան նվաճողների իշխանության տակ մարի երկրի ինքնատիպ հոգևոր մշակույթը» (էջ 337):

Գրքի մենագրական հատվածներից մեկը նվիրված է Դավիթ Անհաղթին, որը մշտապես եղել է գիտնականի հետաքրքրությունների կիզակետում:

⁴ Այս մասին տե՛ս Ա. Դուռուիսան յանակ. Ֆրեդերիկ Մակերը հայագետ, Երևան, 2011, էջ 46–53:

Այդ հատվածը խորագրված է «Դավիթ Անհաղթը հին Հայաստանի նշանավորագույն փիլիսոփա»:

Գրքում քննված են Դավիթ Անհաղթի ինքնուրույն և մեկնողական գործերը: Մեծարժեք է հատկապես մենագրության VII գլուխը՝ Դավիթի գիտական ժառանգության ճակատագիրը ներկայացնող:

Դավիթի նորավասոնական ուղղվածություն ունեցող սինկրետիկ փիլիսոփայությունը հսկայական ազդեցություն է թողել հետագայի հայ իմաստասիրական մտքի վրա: Բնագիտական փիլիսոփայական ամենանշանավոր ներկայացուցիչը VII դարում դարձավ Անանիա Շիրակացին, որը կրում էր Անհաղթի ուսմունքի ազդեցությունը:

Ե՞ւ Շիրակացու, և՛ Անհաղթի գիտական ժառանգության հրամայական շրջանառության մեջ գնողն ու տարածողը Գրիգոր Մագիստրոսն էր. դա պարզ երևում է նրա մի քանի թղթերից: Այդ երևույթի հաջորդական փոխանցողը դարձավ Հովհաննես Սարկավագ Իմաստասերը: Դավիթի աշխատությունները հին ժամանակներում արդեն ազդել են արաբական փիլիսոփայական մտքի վրա: Դա երևում է IX դ. արաբ մտածող Ալ Կինդիի գործերում, ինչպես նաև արաբ բժշկակետ Ալիցենայի աշխատություններում: Իրավացիորեն Արևշատյաննը շեշտում է, թե Դավիթի փիլիսոփայությունը բյուզանդական մշակույթի միջոցով առավել մեծ տարածում է ունեցել դեպի Եվրոպա, ալավոնական երկրներ, Վրաստան:

Երկար կարելի է գրել Ա. Արևշատյանի հետմահու հրատարակված այս մեծարժեք հասորի մասին: Կարեւորն այն է, որ այսօրվա ու հետագայի հետազոտողն այս գրքից ճշգրտորեն կիմանա, թե ինչպիսին է եղել ողջ միջնադարյան Հայաստանի պատմությունը, փիլիսոփայությունը և մշակույթը:

ԱԵԼԻՏԱ. ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Բ. Գ. Դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ. թղթակից անդամ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայ Հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հին և միջնադարյան Հայ գրականություն, բանահյուսություն, ժամանակակից Հայ գրականություն, Հայագիտություն, գրական կապեր: Հեղինակ է 33 գրքի և շուրջ 650 հոդվածի: aelita.dolukhanyan@gmail.com